

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը ՀՀ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում (բացառությամբ Գյումրի և Վանաձոր քաղաքների)՝ բնակվող 18-35 տարեկան պոտենցիալ, սկսնակ և գործող ձեռներեցներին ընձեռում է բիզնես սկսելու կամ զարգացնելու բացառիկ հնարավորություն: Հիմնադրամը նպատակ ունի նպաստելու ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը երիտասարդների շրջանում և նոր աշխատատեղերի ստեղծմանը վերոհիշյալ մարզերում՝ մեծապես խրախուսելով կանանց և աղջիկների մասնակցությունը:

Ծրագիրն ուղղված է բոլոր այն երիտասարդներին, որոնք ունեն.

- **ցանկություն սկսելու իրենց սեփական բիզնեսը,**
- **նոր սկսած բիզնես (մինչև 1 տարի գործունեությամբ) և պայքարում են այն կայացնելու համար,**
- **գործող բիզնես (մինչև 4 տարի գործունեությամբ) և ցանկանում են այն առավել ընդլայնել և զարգացնել:**

Անդամակցելով Երիտասարդ ձեռներեցների միջազգային ցանցին (YBI), որը գտնվում է Միացյալ Թագավորությունում և գործում է աշխարհի 47 երկրում՝ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը սույն ծրագրի շրջանակում մշակել է նոր մոտեցումներ և մեխանիզմներ՝ երիտասարդ ձեռներեցներին երկարատև համապարփակ աջակցություն ապահովելու նպատակով: Հետևաբար, հաշվի առնելով նոր մոտեցումները, սույն ծրագիրը բաղկացած է լինելու հետևյալ փուլերից՝

Փուլ 1. Ընտրության առաջին փուլի արդյունքում գրեթե բոլոր դիմորդները մասնակցում են **բիզնես գաղափարների մշակման և զարգացման դասընթացին:**

Փուլ 2. Ընտրության երկրորդ փուլի արդյունքում ընտրյալները մասնակցում են **բիզնեսի պլանավորման և կառավարման թեմայով վերապատրաստման գործնական դասընթացին:**

Փուլ 3. Դասընթացի մասնակիցները **մշակում և ներկայացնում են իրենց բիզնես ծրագրերը:**

Փուլ 4. Բարձր գնահատված իրատեսական և նորարական գաղափարներով բիզնես ծրագրերը ստանում են **արտոնյալ վարկեր:**

Փուլ 5. Վարկ ստացած երիտասարդ ձեռներեցներին տրամադրվում է **շարունակական (մինչև 5 տարի) տեխնիկական աջակցություն**, որն ուղղորդվում է փորձառու ձեռներեցների, բիզնես խորհրդատուների, նեղ փորձագետների և այլ մասնագետների աջակցությամբ:

Դիմումի ձևը և մանրամասն տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի /ՋՀՀ/ վեբ կայքը www.jinshian.org կամ զանգահարել Վորլդ Վիժն տարածքային զարգացման ծրագրի գրասենյակ կամ ՋՀՀ մարզային գրասենյակներ.

- Մարզ Լոռի, կոնտակտային անձ՝ Լիլիթ Մելիքսեթյան /Վորլդ Վիժն/, հեռ. 095 005415, lilit_meliksetyan@wvi.org
- Մարզ Լոռի, կոնտակտային անձ՝ Լիլիթ Սինդոյան /ՋՀՀ/, հեռ. 077 297456, lilit-sind@mail.ru
- Մարզ Լոռի, կոնտակտային անձ՝ Մելինե Վարդանյան /ՋՀՀ/, հեռ. 043 080629, 90m.vardanyan@gmail.com
- ք.Վարդենիս, կոնտակտային անձ՝ Էվրիկ Ղազարյան/Վորլդ Վիժն/, հեռ. 093 096 096, evrik_ghazaryan@wvi.org
- ք.Ճամբարակ, կոնտակտային անձ՝ Ալեքսանդր Քեշիշյան /Վորլդ Վիժն/, հեռ. 095 005 472, aleksandr_keshishyan@wvi.org
- ք. Գավառ, կոնտակտային անձ՝ Աստղիկ Հովեյան /Վորլդ Վիժն/, հեռ. 095 005443, astghik_hoveyan@wvi.org
- ք. Գավառ, կոնտակտային անձ՝ Վարդան Գարեյան /ՋՀՀ/, հեռ. 094 260790, vgareyan@mail.ru
- Մարզ Շիրակ, կոնտակտային անձ՝ Արշակ Տերյան /Վորլդ Վիժն/, հեռ. 095 005 841, arshak_teryan@wvi.org
- Մարզ Շիրակ, կոնտակտային անձ՝ Հասմիկ Հակոբյան /ՋՀՀ/, 099 790187, hasmik.hakobyan@gmail.com

Լրացված դիմումներն ուղարկել վերոնշյալ էլեկտրոնային հասցեներից մեկով՝ կախված Ձեր բնակության վայրից:

Դիմումի ներկայացման վերջնաժամկետն է **սույն թվականի մայիսի 31-ը:**